ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 57 - 58 (16554) ՇԱԲԱԹ, 22 ՀՈՒԼԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ՈՒԿՐԱԻՆԱ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հուլիսի 18-20-ին, եռօրյա պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն: Այցի շրջանակներում՝ Ուկրաինայի նախագահը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ:

Վրաստանի նախագահի նստավայրում, դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, կայացավ Վրաստանի եւ Ուկրաինայի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Պյոտր Պորոշենկոյի առանձնազրույցը, որին հաջորդեցին ընդլայնված բանակցությունները: Կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների խորացման եւ ընդլայնման հնարավորությունները, երկու երկրներում ռուսական կողմի բռնազավթման քաղաքականության արդյունքում ստեղծված իրավիճակի, այդ պայմաններում պաշտպանական ոլորտում համագործակցության ընդլայնման անհրաժեշտության հարցերը:

Բանակցությունների արդյունքներով՝ կողմերն ստորագրեցին ռազմավարական համագործակ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԱՋԴԱԿ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Հուլիսի 18-19-ին, երկօրյա աշխատանքային այցով, Թբիլիսի էր ժամանել Հայաստանի արտակարգ իրավիճակների (ՀԱԻ) նախարար Դավիթ Տոնոյանը:

Աշխատանքային այցի շրջանակներում՝ կայացավ Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլու եւ Դավիթ Տոնոյանի հանդիպումը:

Հանդիպմանը քննարկվեցին արտակարգ իրավիճակների ոլորտում երկու պետությունների միջեւ համագործակցության խորացման եւ աղետներին համատեղ արձագանքելու հնարավորությունները: Գիորգի Մղեբրիշվիլին, իր հայ գործընկերոջը ներկայացրեց Վրաստանի ՆԳՆ գործունեությունը քաղպաշտպանության եւ արտակարգ իրավիճակների ոլորտներում, մասնավորապես՝ Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության արդիականացման եւ չափորոշիչների մշակ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ԱՄԲԱՍԱԴՈՐՅԱԼ - 2017»

«ՈՉ ԿԱՅՈՒՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆՔԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԱՄԵՆԱՄՅԱ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հուլիսի 18-ին, Թբիլիսիում աշխատանքն սկսեց արտասահմանում Վրաստանի դիվանագիտական առաքելությունների ղեկավարների «Ամբասադորյալ-2017» ամենամյա հավաքը:

«Ոչ կայուն միջավայրում արդյունքին ուղղված դիվանագիտություն» անվանմամբ Ամբասադորյալը աշխատեց չորս օրվա ընթացքում: Հանդիպումը բացեց Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն:

Դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հավաքին մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Հանրագումարելով անցած տարվա դիվանագիտական ոլորտում իրականացված աշխատանքի արդյունքները, արտաքին գերատեսչության ղեկավար Միխեիլ Ջանելիձեն ընդգծեց, որ այդ ժամանակահատվածը աչքի է ընկել աննախադեպ որոշումներով եւ ակտիվությամբ ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ՝ ԵԱՀԿ-ի Եվրոպայի խորհրդի ու նաեւ Վրաստանի գործընկեր երկրնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Հուլիսի 18-ին, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը դիվանագիտությունում ընդունված ավանդույթի համաձայն, հյուրընկալեց Վրաստանում Իրանի նորանշանակ դեսպան Սեյեդ Ջավադին, ում այցելությունը Հայաստանի դեսպանություն կրում էր ճանաչողական բնույթ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Զրուցակիցները կարեւորեցին հայ-իրանական շփումներն ու համագործակցության հեռանկարները բոլոր հնարավոր հարթակներում՝ այդ թվում նաեւ այլ պետություններում՝ Հայաստանի եւ Իրանի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների միջեւ: Հանդիպումն անցավ ջերմ եւ բարեկամական մթնոլորտում:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության ընտրական շտաբը կգլխավորի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն: Նշենք, որ նախորդ ընտրություններին շտաբը գլխավորում էր Կախի Կալաձեն, որը ներկայումս կառավարող կուսակցության կողմից առաջադրվել է Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնի թեկնածու:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա հոկտեմբերին Վրաստանի քաղաքացիներն ընտրելու են տեղական օրենսդրական մարմնի (սակրեբուլոյի) անդամներին, ինչպես նաեւ քաղաքապետերին ու մունիցիպալային վարչությունների ղեկավարներին: Նախընտրական քարոզարշավն սկսվելու է ընտրություններից 60 օր շուտ:

Հիշեցնենք նաեւ, որ Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնի համար՝ կառավարող կուսակցությունն առաջադրել է նախկին փոխվարչապետ, էներգետիկիայի նախարար Կախի Կալաձեի թեկնածությունը: Ընտրություններին Կախի Կալաձեին մրցակցություն կցուցաբերեն «Միասնական ազգային շարժման» թեկնածու, նախկին հեռուստահաղորդավար եւ «Ռուսթավի-2» հեռուստաընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Զաալ Ուդումաշվիլին, «Եվրոպական Վրաստան-շարժում ազատության համար» կուսակցության թեկնածու էլենե Խոշտարիան եւ Թբիլիսիի սակրեբուլոյի անկախ պատգամավոր Ալեկո Էլիսաշվիլին:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏՎԵԼ Է 45 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

ՎՐԱՍՏԱՆԻ 146 ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄՈՒՏՔԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ՄԵՐԺՎԵԼ Է

Ներկա դրությամբ, Վրաստանի քաղաքացիների կողմից Եվրամիության երկրներում անայցեգրային պայմանակարգով գտնվելու 90-օրյա ժամկետի խախտում չի վավերացվել: Այդ մասին հայտարարեց Վրաստանի ՆԳ փոխնախարար Շալվա Խուցիշվիլին:

Նրա խոսքով, ընթացիկ տարվա մարտի վերջից անայցեգրային պայմանակարգից օգտվել է Վրաստանի շուրջ 45 հազար քաղաքացի:

Նրա տեղեկատվությամբ, Եվրամիության երկրներ մուտք գործելու մերժում է տրվել Վրաստանի 146 քաղաքացու:

Հիշեցնենք, որ Եվրամիության երկրների հետ Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգը սկսել է գործել 2017 թվականի մարտի 28-ից:

ՎՐԱՍՏԱՆ - ՈՒԿՐԱԻՆԱ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցության ուժեղացման հուշագիր, ինչպես նաեւ՝ կրթության բնագավառում համագործակցության համաձայնագիր, ապա երկու երկրների նախագահներն անցկացրին համատեղ մամլո ասուլիս: Վրաստանի նախագահն ուկրաինացի իր գործընկերոջ սույն այցն անվանեց պատմական եւ հայտարարեց, որ այն կարող է ազդակ հաղորդել երկկողմ հարաբերությունների ընթացքին:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոյի հանդիպմանը քննարկվեցին երկու երկրների միջեւ ռազմավարական հարաբերությունների ձեւավորման հետ առնչվող հարցեր:

Այցի շրջանակներում՝ Ուկրաինայի նախագահն այցելեց Բաթումի, որտեղ հանդիպում ունեցավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Զուրաբ Աբաշիձեի հետ: Հանդիպմանը կողմերը պայմանավորվեցին ակտիվացնել իրենց համագործակցությունը կրթության եւ զբոսաշրջության ոլորտներում:

«ԱՄԲԱՍԱԴՈՐՅԱԼ - 2017»

«ՈՉ ԿԱՅՈՒՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆՔԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի շրջանակներում: Փոխվարչապետի հավաստմամբ, ակտիվությունները շարունակվում են կառավարական բոլոր կառույցների ներգրավմամբ: «Տվյալ պարագայում կարեւոր է ոչ միայն կառավարության միասնությունը, այլեւ՝ քաղաքական սպեկտրի եւ հասարակայնության հավատարմությունը այդ մոտեցմանն ու հիմնախնդիրների ճիշտ գնահատմանը, որոնց առջեւ այսօր կանգնած է Վրաստանը: Քայլերը, որոնք իրականացվում են Վրաստանի կառավարության եւ վրաց դիվանագիտության կողմից, անհրաժեշտ է աջակցություն եւ ոչ թե ապակայունացում»,- ասաց ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, «Ամբասադորյալ-2017»-ի հավաքում, իր ելույթը նվիրեց Վրաստան-Ռուսաստան փոխհարաբերություններին: Նրա խոսքով, բռնազավթված տարածքների չճանաչման ենթատեքստում միջազգային հանրության աջակցությունը հիմնված է այն արժեքների վրա, որոնք դրված են Վրաստանի՝ որպես ժողովրդավարական պետության հիմքում, որտեղ պաշտպանված են մարդու իրավունքները, լրատվամիջոցները եւ ժողովրդավարական մյուս արժեքները:

«Ամբասադորյալ-2017»-ի հավաքում, իր խոսքում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ երկիրը կարող է հպարտանալ նրանով, որ ունի բարձր որակավորված եւ հայրենասիրական տրամադրվածությամբ դիվանագիտական կորպուս: Նա դիվանագետներին շնորհակալություն հայտնեց կատարած աշխատանքի համար: «Այսօր ոչ կայուն եւ հաճախ անկանխագուշակելի միջազգային միջավայրը վիթխարի մարտահրավերների եւ ռիսկերի աղբյուր է հանդիսանում հիմնականում այնպիսի փոքր երկրի համար, ինչպիսին է Վրաստանը: Նման միջավայրում երկրի հաջող զարգացման համար կարեւոր նշանակություն ունի սպառնալիքներից խուսափումը ու բոլոր հնարավորությունների օգտագործումը: Ցանկացած պետության համար կարեւոր նշանակություն ունի միջազգային մարտահրավերների հաջող հաղթահարումը, եւ այդ առումով դիվանագիտությունը նշանակալից դեր ունի»,- ընդգծեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Խորհրդաժողովին ելույթ ունեցան նաեւ Վրաստանի հաշտեցմանա եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Խորհրդաժողովի աշխատանքային նստաշրջանին ելույթ ունեցան նաեւ Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, ԱՄՆ-ից քաղաքական վերլուծաբան Լինկոլն Միտչելը, Լիտվայում եվրահանձնաժողովի ներկայացուցչության ղեկավար Առնոլդաս Պրանցկեւիչուսը, հայաստանցի վերլուծաբան Դավիթ Շախնազարյանը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԱՁԴԱԿ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ման 5-ամյա ծրագիրը:

Ներկայացնելով արտակարգ իրավիճակների բնագավառում հայ-վրացական համագործակցության զարգացման հեռանկարների հայկական կողմի տեսլականը՝ ՀԱԻ նախարարը վստահություն հայտնեց, որ հանդիպումից հետո երկու պետությունների միջեւ համագործակցությունը եւ համատեղ արձագանքումը՝ արտակարգ իրավիճակներին, կդառնա առավել սերտ ու արդյունավետ:

Իր խոսքում, Դավիթ Տոնոյանը նշել է, որ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մի շարք միջազգային կառույցների հովանու ներքո ուժեղացնել հայ-վրացական անդրսահմանային արձագանքումը՝ բնական եւ մարդածին աղետներին, ինչը կնպաստի երկու պետությունների բնակչության դիմակայունության բարձրացմանը:

Դավիթ Տոնոյանը, Գիորգի Մղեբրիշվիլու ուղեկցությամբ, այցելեց նաեւ Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալություն եւ համատեղ գործողությունների կենտրոն՝ ծանոթանալու վերջիններիս գործառույթներին եւ տեխնիկական հագեցվածությանը:

Նշենք, որ սա Հայաստանի նախարարի անդրանիկ այցն էր Վրաստան: ԱԻ նախարարի գլխավորած պատվիրակության կազմում էին ԱԻ փոխնախարար է.Ապրիամովը եւ նախարարության փրկարար ծառայության տնօրեն, գնդապետ Մուշեղ Ղազարյանը:



ՀՈՒՆԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐՈՎ

Հուլիսի 20-ին էգեյան ծովում՝ Թուրքիայի եւ Հունաստանի ափերին մոտ ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել: Հիմնական հարվածը ստացել են թուրքական զբոսաշրջային Անտալիայից ոչ հեռու գտնվող Բոդրում քաղաքը եւ հունական Կոս կղզին:

ԱՄՆ երկրաբանական ծառայության տվյալներով, երկրաշարժի ուժգնությունը կազմել է 6.7 բալ: Էպիկենտրոնը գտնվել է Բոդրումից 10.3 կմ, իսկ Կոսից՝ 16.2 հեռավորության վրա:

Առաջին ցնցումներից հետո գրանցվել են մի քանի հետցնցումներ, որոնցից ամենաուժեղը եղել է 5.1 մագնիտուդով: Սեյսմոլոգները հայտնել են էգեյան ծովում ոչ մեծ ցունամիի մասին:

Նախնական տվյալներով, Կոս կղզում մահացել է երկու մարդ, տուժել են 120-ը: Կղզում քանդվել են մի շարք շինություններ:

Թուրքական Բոդրումում բժշկական օգնության համար դիմել է 70 մարդ:

ՀՆԴԿԱՍՏԱՆ ՌԱՄ ՆԱԹ ՔՈՎԻՆԴԸ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

72-ամյա Ռամ Նաթ Քովինդը, որին առաջադրել էր կառավարող Բհարաթիա ջանաթա պարտին (ԲՋՊ, Հնդկաստանի ժողովրդական կուսակցություն), ընտրվել է Հնդկաստանի նախագահ: Քովինդը հավաքել է քվեատուների ձայների ավելի քան 65 տոկոսը:

Քովինդը դարձել է 1950 թվականից ի վեր երկրի 14-րդ նախագահը, երբ Հնդկաստանում սահմանվել է նախագահի պաշտոնը: Բացի դրանից Քովինդը դարձել է դալիթներից սերած երկրորդ նախագահը. Հնդկաստանում այսպես են կոչում անձեռնմխելիների ստորին կաստաների անդամներին: Երկրի գործող նախագահ Փրանաբ Մուքերջիի լիազորությունները լրանում են հուլիսի 24-ին, պետության ընտրյալ ղեկավարը պաշտոնը կստանձնի հաջորդ օրը:

Առեւտրի եւ իրավունքի բակալավր աստիճան է ստացել Քանփուրի համալսարանում: Աշխատել Դելիի Բարձր դատարանում եւ երկրի Գերագույն դատարանում:

Եղել է խորհրդարանի վերին պալատի պատգամավոր,ապա նշանակվել Բիհարի նահանգի նահանգապետ: Ամուսնացած է, ունի որդի եւ դուստր:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ եւ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ, Ախալքալաքիում տեղի ունեցավ տեղեկատվական հանդիպում:

Պետնախարարի առաջին տեղակալ Պետրե Կանկավան, պետական մյուս գերատեսչությունների ներկայացուցիչները հանդիպում ունեցան Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի տեղական ինքնակառավարման տարածաշրջանի ոչ կառավարական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, ինչպես նաեւ տեղի գործարարների եւ ֆերմերների հետ:

Հանդիպմանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիում պետական լիազոր-նահանգապետ Ակակի Մաճուտաձեն, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների վարչությունների նախագահներ Էդուարդ Աղասարյանն ու Գագիկ Կարսլյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանը:

Պետրե Կանկավան հանդիպմանը հավաքվածներին տեղեկացրեց քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ իրականացված եւ ծրագրված միջոցառումների մասին եւ ընդգծեց, որ «քաղաքացիական իրավահավասարության, ինտեգրման պետական ռազմավարության եւ 2015-2020 թվականների գործունեության ծրագրով» սահմանված բոլոր ուղղություններով առաջընթացն ակնհայտ է: Պետրե Կանկավան անդրադարձավ նաեւ այն հարցերին, թե ինչ օգուտ կարող են ստանալ տեղի գործարարներն ու, ընդհանրապես, բնակչությունը, Եվրամիության հետ ազատ առեւտրի պայմանագրի առկայության պայմաններում:

Եվրամիության հետ խոր եւ համընդգրկուն ազատ առեւտրի համաձայնագրից բխող օգուտների, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտի հնարավորությունների մասին տեղացիներին, մանրամասն տեղեկատվություն հաղորդեցին էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Գենադի Արվելաձեն, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարարի տեղակալ Արչիլ Ղարաուլաշվիլին, գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ Լաշա Ինաուրին եւ «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի ներկայացուցիչ Օթար Անթիան:

- Հանդիպմանը մենք մտքեր փոխանակեցինք այն հնարավորությունների եւ օգուտի մասին, որ կարող են ստանալ տեղի գործարարները: Մանրամասն տեղեկատվություն հաղորդվեց նաեւ պետնախարարի աշխատակազմի իրավասության շրջանակներում քաղաքացիական ինտեգրման տեսանկյունից իրականացված եւ ծրագրված միջոցառումների մասին: Մեր աշխատակազմը շարունակում է այդ ուղղությամբ աշխատանքը: Կրկին ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում ծրագրված են տարբեր միջոցառումներ,- ասաց մեզ հետ զրույցում հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Պետրե Կանկավան:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

39 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2017 թվականի հոկտեմբերին տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացման համար, պետբյուջեից հատկացվել է 39 միլիոն լարի:

Ինչպես հայտարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի խոսնակ Աննա Միքելաձեն, այդ գումարում ներառված են բոլոր այն ծախսերը, որոնք կապված են ընտրությունների կազմակերպման հետ: «Այդ գումարում ներառված են նախապատրաստական ծախսերը, կադրերի նախապատրաստման եւ վերապատրաստման, ընտրական սուբյեկտների հեռուստատեսային գովազդման ծախսերը՝ մոտ 2 միլիոն լարի, ինչպես նաեւ ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների ֆինանսավորման գումարը՝ 7 միլիոն լարի: Ներառված են նաեւ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման, մարզային եւ տեղամասային հանձնաժողովների անդամների եւ ԿԸՀ աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերը, տրանսպորտի, կապի, կոմունալ սպասարկման, տպագրության, գույքի եւ մյուս ծախսերը»,- հայտարարեց Աննա Միքելաձեն՝ հավելելով, որ 39 միլիոն լարին նախատեսված է միայն ընտրությունների առաջին փուլի անցկացման համար: Եթե նշանակվի երկրորդ տուրը, ապա կանցկացվի վերահաշվարկում, եւ գումարը կախված կլինի նրանից, թե քանի ընտրամարզերում է անցկացվելու ընտրությունների երկրորդ տուրը:

ՑԵՍԿՈ
ՍԱՔԱՐՏՎԵԼՈՅՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱԿՄՈՒՆԻՍՏՐԱՑԻԱ

ՈԼՈՐՏ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐՈՒՄ՝ ԿԱՆԱՆՑ ԴԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Հուլիսի 15-ին, Վրաստանում անցկացված խորհրդաժողովում, քննարկվեցին գյուղատնտեսական կոոպերատիվներում եւ կանանց ակումբներում կանանց դերի առավել ակտիվացման հարցեր: Միջոցառումն անցկացվեց Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Վրաստանում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման աջակցության նախագծի եւ գյուղատնտեսության հարեւանությամբ ու գյուղատնտեսական շրջանների զարգացման եվրոպական ծրագրի (ENPARD) կազմակերպմամբ:

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի գյուղատնտեսության նախարարության, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալության, միջազգային կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակայնության ներկայացուցիչներ: Միջոցառմանը ներկա էին նաեւ կանանց կոոպերատիվների ու ակումբների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովի մասնակիցներն անցկացրին փորձի փոխանակում եւ քննարկեցին գյուղատնտեսական կոոպերատիվներում կանանց դերի ու Վրաստանի գյուղատնտեսական շրջանների զարգացման հարցեր:

Գյուղատնտեսության հարցերով հարեւանության եւ գյուղատնտեսական շրջանների զարգացման եվրոպական ծրագիրը Վրաստանում իրականացվում է 2013 թվականից: Ծրագրի հիմնական նպատակն է՝ գյուղատնտեսական շրջաններում աղքատության մակարդակի նվազեցումը: 2013-2019 թվականների համար ENPARD ծրագրի բյուջեն կազմում է 102 միլիոն եվրո:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՐՑԸ ԴԵՌ ՉԻ ՔՆՆԱՐԿՎԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն, դեռեւս կողմերը պատրաստ չեն ընդունելու որոշում գործազրկության նպաստի վերաբերյալ: Նրա խոսքով, այդ թեմայի շուրջ պարբերաբար խորհրդատվություններ են տարվում:

- Գործազրկության դինամիկան, փոխհատուցումը՝ դա ամենաուսումնասիրված թեման է համաշխարհային պրակտիկայում: Առանձին երկրներում դա ընդունվել է, որոշ երկրներում՝ ոչ: Դա կապված չէ գործազրկության մակարդակի կամ երկրի տնտեսական զարգացման հետ: Յուրաքանչյուր երկիր նման որոշում ընդունում է, ինչը նշանակալից է դառնում նրա տնտեսական զարգացման տվյալ փուլի համար: Բնականաբար, այդ թեմայով խորհրդատվություններ տարվում են, սակայն, կողմերից ոչ մեկը, այսօրվա դրությամբ, որոշում ընդունելու պատրաստակամություն չի հայտնել,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆՆ ԱՎԵԼԱՑՎԵՑ

Հուլիսի 20-ին ուժի մեջ մտավ Վրաստանի քաղաքացիների համար բնական գազի սպառողական նոր սակագինը: Սակագնի ավելացման մասին որոշումը էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովն ընդունեց հուլիսի 18-ին՝ հիմք ընդունելով գազաբաշխիչ ընկերությունների դիմումը:

2017 թվականի հուլիսի 20-ից բնական գազի սպառողական սակագինն ավելացվում է եւ նոր սակագինը կգործի մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հանձնաժողովի որոշման համաձայն, Թբիլիսիի բնակիչների համար բնական գազի սակագինը, որի մատակարարումն իրականացնում է «Ղազախտրանսգազ» ընկերությունը, ՀԱՀ-ի հաշվարկմամբ, մեկ խորանարդ մետրի արժեքը կկազմի 46,153 թեթրի, իսկ տարածաշրջանների բնակիչների համար, ովքեր գազը ստանում են Սոկար եւ «Սաքօրգազ» ընկերություններից, ՀԱՀ-ի հաշվարկմամբ կկազմի 56,940 եւ 57,011 թեթրի: Փաստորեն, բնական գազի սպառողական սակագինն ավելացվում է՝ առանց բացառության բոլորի համար: Քանզի այսօրվա դրությամբ, Թբիլիսիի բնակիչների համար սակագինը կազմում էր 45,62 թեթրի, Սոկարի սպառողների համար 35,03-ից մինչեւ 49,5 թեթրի, իսկ «Սաքօրգազի» սպառողների համար՝ 38,8-ից մինչեւ 50,02 թեթրի:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՈՒԺՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հուլիսի 20-ին Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն հանդիպում ունեցավ կոմերցիոն բանկերի ղեկավարների հետ:

Հանդիպմանը կոմերցիոն բանկերը տեղեկատվություն ներկայացրին վերջերս հրդեհների արդյունքում տուժյալ քաղաքացիների բանկային պարտավորությունների մասին: Ներկայացված տեղեկատվությամբ հաջողվել է համաձայնության հասնել հաճախորդների համար ընդունելի պայմանների հարցում: Արտոնությունները հիմնականում ներկայացվել են վարկերի մուծման հետաձգման գործում, իսկ առանձին հաճախորդների համար նրանց դիմումի համաձայն, գործունեության պարապուրդի կանխման նպատակով, վարկային լիմիտի ավելացման հարցում:

Հանդիպմանը կարծիքներ ներկայացվեցին նաեւ այն մասին, թե առաջիկայում ինչպես կարելի է խուսափել նման հիմնախնդիրներից:

- Հրշեջ անվտանգության բարելավմանը զուգընթաց, շուկայում վարձակալողների պաշտպանության մեխանիզմներից մեկը հանդիսանում է գույքի եւ բիզնեսի ապահովագրությունը: Բանկերը պատրաստակամություն հայտնեցին՝ տեղեկատվություն ներկայացնել ապրանքների ապահովագրության վերաբերյալ եւ, ընդհանրապես, խորհուրդ է տրվում վարկային որոշումների ընդունման ժամանակ շեշտը դնել ապրանքապաշարների առեւտրական տարածքների ապահովագրության վրա,- ասաց Կոբա Գվենետաձեն:

Ինչպես նշեց Ազգային բանկի նախագահը անհրաժեշտ է պահպանել հավասարակշռություն, որպեսզի մի կողմից սպառնալիքներ չծագեն երկրի ֆինանսական կայունության հարցում, մյուս կողմից՝ հնարավորության սահմաններում տուժյալներին ցուցաբերվի առավելագույն աջակցություն:

ՍԻՄՈՆ ԿԻԼԻՋԵ



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ԱՅՆ, ԻՆՉ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՏԵՂ ՉԻ ԳՏՆԻ»

Առարկայի ուսումնասիրությունը սկսվել է, սակայն մենք նախօրոք քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի դասագրքերում չլինեն այնպիսի հարցեր, որոնք անընդունելի են աշակերտների ընտանիքների համար: Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան՝ պատասխանելով «Ես եւ հասարակությունը» առարկայի վերաբերյալ հարցին: Նրա խոսքով, առարկայի կառուցվածքն ու ծրագիրը գործնականում համաձայնեցված է բոլորի հետ:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐՈՄՈԲԻԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թելավիից Բաթումի, 463 կիլոմետր ճանապարհի վրա կտեղակայվեն էլեկտրոմոբիլների լիցքավորման կայաններ: Այդ սպասարկմամբ հնարավոր կլինի օգտվել նաեւ գազալցման կայաններում, հյուրանոցներում եւ սուպերմարկետներում: Սպասարկումը մինչեւ տարեվերջ կլինի անվճար:

Ծրագրվում է էլեկտրալիցքավորման կայաններ տեղակայել Վրաստանի ողջ տարածքում, ինչը էլեկտրոմոբիլների եւ հիբրիդային ավտոմեքենաների տերերին թույլ կտա՝ առանց կանգառման Թելավիից հասնել Բաթումի:

ՀՐԴԵՀ՝ ԹԲԻԼԻՍԻԻ «ԴԵԶԵՐՏԻՐԻ» ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հուլիսի 17-ի կեսօրին՝ հրդեհ բռնկվեց Թբիլիսիի կենտրոնում գտնվող «Դեզերտիրի» շուկայում:

Ինչպես տեղեկացրել է ՆԳՆ արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունը, հրդեհը կարճ ժամանակահատվածում հնարավոր եղավ մարել, թեպետ լրիվությամբ այրվել են 180-240 քառակուսի մետր զբաղեցնող պահեստները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՑ ԱՂՄԿԵԼԸ ԿԱՐԳԵԼՎԻ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի սակրեբուլոյի իրավաբանական հանձնաժողովի նախագահ Թեդո Կոբախիձեն, աղմուկի արգելման օրենքը ուժի մեջ կմտնի օգոստոսի 15-ից: Իսկ մինչեւ օգոստոսի 1-ը կառավարությունը մշակելու է տեխնիկական կարգ, որով եւ կսահմանվի դեցիբելների մակարդակը:

Ինչպես նշեց Թեդո Կոբախիձեն, օրինախախտումը սահմանվելու է աղմկաչափիչներով: Խախտման բացահայտման դեպքում, կտուգանվեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ իրավաբանական անձինք:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(21 Հուլիսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.366	2.426
ԵՎՐՈ	2.750	2.830
ՌՈՒԲԼԻ	0.0387	0.0427
ԴՐԱՄ	0.0035	0.0053

Հուլիսի 7-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0,07 լարիով:

ԲԱԲԿԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ - 100

ՀԱՅ ԲԵՄԻ ՄԵԾ ՆՎԻՐՅԱԼ ԹԲԻԼԻՍՑԻՆ

Անցած երեքշաբթի, հուլիսի 18-ին, լրացավ հայ բեմի մեծ վարպետ, Խորհրդային Միության ժողովրդական արտիստ Բաբկեն Ներսիսյանի ծննդյան 100-ամյակը:

Ծնվել է Թբիլիսիում՝ Մուշի Լիզ գյուղից գաղթած Պողոս եւ Եղիսաբեթ Ներսիսյանների ընտանիքում: Տղան դերասանական աստվածատուր շնորհ ուներ: Կանխատեսելի էր, որ պատանին պիտի գնար թատրոն: Բնական է՝ հայկական: Իսկ այդպիսիք Թբիլիսիում 30-40-ական թվականներին երկուսն էին՝ դրամատիկական եւ պատանի հանդիսատեսի թատրոնը, որը փակվեց 50-ական թվականներին, որը գործում էր հին Թբիլիսիի Լերմոնտովի փողոցի սկզբում, նախկին Հայ բարեգործական միության շենքում, ուր այնուհետեւ գործեց Թբիլիսիի հայկական գրադարանը: 17 տարին նոր լրացած Բաբկենը դիմեց պատանի հանդիսատեսի թատրոն: Ընդունեցին: Այստեղ էլ նա կայացավ որպես դերասան, շատ շուտով դարձավ այդ թատրոնի առաջատար դերասաններից մեկը: Որոշ ժամանակ անց, Բաբկեն Ներսիսյանն արդեն Ստեփան Շահումյանի (այժմ՝ Պետրոս Ադամյանի) անվան դրամատիկական թատրոնի դերասան էր:

Այստեղ, իհարկե, Բաբկեն Ներսիսյանի տաղանդը նորովի փայլեց. Դրամատիկականը, իհարկե, պատանի հանդիսատեսի թատրոնը չէր: Այստեղ թե' խաղացանկն էր ուրիշ, թե' հանդիսատեսը, բնական է, նաեւ՝ պահանջները: Այս թատրոնում էին աշխատում հայ բեմի լեգենդներ Մարի եւ Արտեմ Բերոյանները, Լեւոն Ալավերդյանը, Վահան Գալստյանը, Պահարեն, Մարիամիկ Մոճոռյանը, համեմատաբար երիտասարդ Դորի Ամիրբեկյանը, Վեներա Հակոբյանը, Արտեմ Լուսինյանը եւ էլի բեմի այլ մեծ վարպետներ:

Նոր թատրոնում Բաբկեն Ներսիսյանի առաջին իսկ բեմելը ցույց տվեց, որ թատրոն է եկել բավական հետաքրքիր դերասան, ում հանձնարարվելու էին հերոսի դերեր: Ներսիսյանից շատ քիչ ժամանակ պահանջվեց, որպեսզի նա դառնար Շահումյանի անվան թատրոնի սյուներից մեկը, տեղի թատերասերների կուռքը: Ռեժիսորները, իրոք, նրան էին վստահում գլխավոր դերերը թե' դասական, թե' ժամանակակից գործերում: Ընդ որում, այդ դերերը տարբերվում էին ժանրային առումով: Նա մե'կ Համբո էր խաղում, մե'կ Ֆերդինանդ, մե'կ Քաջ Նազար, մե'կ Արսեն, մե'կ Աբիսողոմ աղա էր կերտում, մե'կ Պեպո: Նրա Պեպոն կերտված չէր, այն պարզապես՝ «քանդակած» էր: Այդ դերակատարումը, երեւի, իր հավերժ տեղը կունենա հայ եւ վրաց թատրոնների տարեգրության մեջ: Իսկ ինչո՞ւ նաեւ վրաց: Բացատրեմ...

1955 թվականին Թբիլիսիի Ռուսթավելու անվան թատրոնի ազդագրերում հետաքրքիր մի տեղեկություն երեւաց. նոյեմբերի 13-ին տեղի է ունենալու «Պեպո»-ի 200-րդ ներկայացումը: Երեւույթն ինքնին հիշարժան էր: Հիրավի, Գաբրիել Սունդուկյանի այդ գլուխգործոցը Վրաստանի մայր թատրոնի բեմից չէր իջնում տասներկու խաղաշրջան: Բայց միայն դա չէր հիշարժանը: Բանն այն էր, որ վրացական թատրոնի բեմում Պեպոյի դերը կատարելու էր հայազգի դերասան: Եվ դա Ստ.Շահումյանի անվան պետհայդրամայի դերասան, այն ժամանակ Վրացական ԽՍՀՄ վաստակավոր արտիստ, հետագայում նաեւ Վրաստանի ժողովրդական արտիստ Բաբկեն Ներսիսյանն էր: Մինչ այդ, նման բան եղել էր 1875 թվականին: Այն ժամանակ Պեպոյի դերում հանդես եկավ հայ բեմարվեստի երեւելի դեմքերից մեկը՝ Գեւորգ Չմշկյանը, ընդ որում, նա դերը կատարեց վրացերենով: Եվ ահա 80 տարի անց՝ հայ դերասանը նորից է հանդես գալիս Պեպոյի դերում ու նորից ոչ թե իր մայրենի լեզվով, այլ՝ նորից վրացերենով: Պետք է նշել, որ, 20-րդ դարի երկրորդ կեսերին, վրաց դերասանների հետ մինչ այդ Պեպո էր խաղացել շահումյանցիների մեկ այլ առաջատար դերասան, Վրաստանի ժողովրդական արտիստ Արտեմ Լուսինյանը: Բայց նա իր դերը կատարել էր հայերենով, մինչդեռ Բաբկեն Ներսիսյանը խաղալու էր վրացերենով: Այո, Գեւորգ Չմշկյանից հետո առաջին անգամ հայ դերասանը Պեպոյի դերը կատարելու էր վրացերենով:



Կրկնակի հոբելյանական այդ ներկայացումը վերածվեց հայ-վրացական բարեկամության վառ դրսեւորման: Ներկայացման մեջ զբաղված էին Ռուսթավելու անվան թատրոնի լավագույն ուժերը: Զիմզիմովի դերում հանդես էր գալու Խորհրդային Միության ժողովրդական արտիստ Ակակի Վասաձե: Դե, ռուսթավելցիների անզուգական Պեպոն, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ակակի Խորավան գլխավոր հերոսի դերը, բնական է, զիջել էր Բաբկեն Ներսիսյանին: Եվ հիմա նա թատրոն էր եկել իր համար անսովոր՝ հանդիսատեսի դերում: Այս ակնարկը գրելու ժամանակ, Բաբկեն Ներսիսյանի տղան՝ Տիգրանը, ինձ պատմեց մի հետաքրքիր պատմություն: Այդ հիշարժան ներկայացման ժամանակ Ակակի Խորավայի կողքին նստած էր Բաբկենի կինը՝ տիկին Ժենյան: Մեծ արտիստը նկատում է, որ իր կողքին նստած գեղեցկուհին չափազանց հուզված է: Խորավան, որ նույնպես անտարբեր չէր բեմում տեղի ունեցածի նկատմամբ, նկատում է դա, եւ դիմում է կողքին նստած երիտասարդ կնոջը.

- Ներողություն տիկին, ես որ այսքան հուզված եմ, հասկանալի է: Ես մտածում եմ բեմում եղած երիտասարդի մասին, ում զիջել եմ Պեպոյի դերը, եւ ով նոր էջ է գրում հայ-վրացական թատերական կապերի տարեգրության մեջ: Իսկ Դուք ինչո՞ւ եք այդքան հուզված:

- Ես Բաբկեն Ներսիսյանի կինն եմ,- ամոթխած պատասխանում է Ժենյա Ներսիսյանը...

- Դե, եկեք միասին «հուզվենք»...

Ինչպես Տիգրանին պատմել է մայրը, ներկայացման ավարտից հետո, Ակակի Խորավան առաջիններից մեկն է բեմ բարձրանում ու գրկում հայ արտիստին եւ սրտանց շնորհավորում է երիտասարդ արվեստակից ընկերոջը:

- Բաբկեն, սիրելիս, դու այսօր արեցիր այն, ինչ ութսուն տարի առաջ արել էր հայ մեծագույն դերասան, հայ բեմի անզուգական Պեպոն՝ Գեւորգ Չմշկյանը: Շնորհակալություն...

Այս հաճելի ընդմիջարկումից հետո կրկին վերադառնանք Ռուսթավելու թատրոնի ներկայացմանը:

Էփեմիայի դերում հանդես էր գալու Վրաստանի ժողովրդական արտիստուհի Մեդեա Չախավան: Բանն այն է, որ այդ դերասանուհին, ով տասներկու թատերաշրջան անզուգական էփեմիա էր, այդ օրերին գտնվում էր ֆիզարձակուրդում: Իմանալով հոբելյանական ներկայացման եւ Բաբկեն Ներսիսյանի՝ այդ ներկայացմանը մասնակցելու մասին, նա խնդրում է ռեժիսոր Դմիտրի Ալեքսիձեին՝ թույլ տալ խաղալու այդ ներկայացման մեջ: Ռեժիսորն առարկում է, բայց... չի դիմանում մայրացման շեմին կանգնած դերասանուհու թախանձագին հորդորներին եւ... Մեդեա Չախավան բեմ է բարձրանում:

Դահլիճը, հասկանալի է, լեփ-լեցուն էր: Ես այն երջանիկներից եմ, որ ներկա եմ եղել այդ ներկայացմանը: Հիշում եմ, երբ Ներսիսյան-Պեպոն առաջին անգամ բեմ մտավ, նա մի տեւական ժամանակ, կասեի՝ մի հավերժություն, չէր կարողանում դերի մեջ մտնել: Դահլիճը թնդում էր ծափողջույններից: Ահա այդպես վրացի թատերասերը դիմավորեց հայազգի դերասանին: Նույնպիսի ջերմությամբ հանդիսատեսը, ով քաջատեղյակ էր Մեդեա Չախավայի գրեթե հերոսական քայլին, դիմավորեց նաեւ Չախավա-էփեմիային: Ես եւ հայրս՝ գրող եւ գրաքննադատ Կորյուն Ազրոյանը, նստած էինք բանաստեղծ եւ դրամատուրգ Սուրեն Ավչյանի կողքին: Հենց նա էլ մեզ ասաց Մեդեա Չախավայի ֆիզարձակուրդում լինելու մասին:

Ներկայացումն աննախադեպ հաջողություն ունեցավ: Թատերասերները երկարերկար թույլ չէին տալիս դերասաններին հեռանալու բեմից: Թատրոնի կամարների ներքո բավական երկար հնչում էին բուռն ծափերն ու «վաշա» («կեցցե») բացականչությունները: Դահլիճը չէր հանդարտվում...

Հանդիսատեսի խնդրանքով՝ Սունդուկյանի այդ պիեսի 201-րդ ներկայացումը մեկ օր անց տեղի ունեցավ Շահումյանի անվան թատրոնի բեմում: Երեւի թե կարիք չկա ասելու, որ այդ ներկայացումը Հավլաբարում եւս արժանացավ նույնպիսի ջերմ ընդունելության: Այս անգամ ողջ Հավլաբարն էր ցնծում...

Հենց այդ տարի Բաբկեն Ներսիսյանը Վարդան Աճեմյանից հրավեր ստացավ աշխատելու հայոց Մայր թատրոնում՝ Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում: Հասկանալի է, որ այդ հրավերն անմիջապես ընդունվեց, քանի որ Մայր թատրոնում աշխատելը յուրաքանչյուր հայ դերասանի գլխավոր երազանքն է: Փոխարենը դեմ էին շահումյանցիների ղեկավարները՝ թատրոնի տնօրեն Վաղարշակ Էլիբեկյանը, ռեժիսորներ Ֆերդինանդ Բժիկյանն ու Ալեքսանդր Աբարյանը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՇՐՋԱՊԱՏՄԱԿԱՆ ՍԱՄՍԱԽՈՒՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ. ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հուլիսի 18-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը համաշխարհային մաքսային կազմակերպության եւ ՄԱԿ թմրանյութերի ու կազմակերպված հանցագործության դեմ պայքարի գրասենյակի հետ համատեղ՝ անցկացրեցին տարածաշրջանային հավաք:

Հանդիպումն անցկացվեց «Թբիլիսի Մարիոտ» հյուրանոցում եւ դրան մասնակցեցին Ուկրաինայի, Ադրբեջանի, Աֆղանստանի, Պակիստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի մաքսային վարչությունների ղեկավարները: Հանդիպմանը քննարկեցին համաշխարհային մաքսային կազմակերպության եւ ՄԱԿ թմրանյութերի եւ կազմակերպված հանցագործության դեմ պայքարի գրասենյակի համատեղ՝ կոնտեյներների վերահսկողության ծրագրի շրջանակներում տարածաշրջանային եւ միջազգային համագործակցության հարցերը: Տարբեր երկրների մաքսային վարչությունների ղեկավարները քննարկեցին տեղեկատվության փոխանակման եւ համատեղ գործողությունների հետ կապված այնպիսի նշանակալից հարցեր, ինչպիսիք էին թմրանյութերի վաճառքի եւ ապօրինի այլ գործողությունների կանխումը, բարձր ռիսկի բեռների նույնականացումը, օրինական առեւտրի աջակցությունը եւ այդ առումով միջազգային համագործակցությունն ու գործնական հանձնարարականների փոխանակումը:

«Մաքսային կազմակերպության որպես պետական սահմանի ապահովման առավել նշանակալից գերատեսչության արդարացված ու հստակ գործունեությունը, մեծ նշանակություն ունի: Հարկ է նաեւ նշել, որ երկրի ներսում սահմանի անվտանգության գործում ներգրավված այլ գերատեսչությունների հետ համագործակցությունն առանձնակի նշանակություն ունի, սակայն երբ խոսքը վերաբերում է տրանսսահմանային հանցագործություններին, ապա տվյալ պարագայում նշանակալից է դառնում տարբեր երկրների իրավապահ գերատեսչությունների համակարգված գործունեությունը: Կարծում եմ, որ կոնտեյներների գլոբալ վերահսկողության ծրագիրը հիանալի հարթակ է նման հանցագործության համար»,- տարածաշրջանային հավաքին հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի տեղակալ Վախտանգ Լաշքարաձեն:

Կոնտեյներների վերահսկողության ծրագրի, ՄԱԿ-ի եւ Համաշխարհային կազմակերպության համակարգողներն ընդգծեցին, որ ծրագրի իրականացման նպատակն է օգնել նախագծում ներգրավված երկրի կառավարություններին, հստակորեն իրականացնել կոնտեյներների վերահսկողությունը, ինչը, իր հերթին, կնպաստի թմրանյութերի փոխադրման եւ ապօրինի այլ գործողությունների կանխմանն ու օրինական առեւտրի զարգացմանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ